



“ՆՈՐ ԱՇԽԱՐՀ” ARMENIKO EBΔΟΜΑΔΙΑΙΟ ΕΝΗΜΕΡΩΤΙΚΟ ΕΝΤΥΠΟ

ՁԱ Տարի, թիւ 2(2316), Երկուշաբթի, 8 Յունուար, 2018 (ԿՈՁ. 3379) 61օ Ետօ՛ս, ար.փոլլօս 2(2316), Ըււտէրա 8 Իաւուարիօս, 2018

Ամանորեայ ողջոյն ՌԱԿ բոլոր կառոյցներին եւ անդամներին Լաւատեսութեամբ դիմաւորենք 2018 թուականը

Ռամկավար Ազատական կուսակցութեան Կենտրոնական վարչութիւնը Նոր տարուայ եւ Ս. Ծննդեան առթիւ ջերմօրէն շնորհաւորում եւ տօնական բարեմաղթօրհիններ է յղում ՌԱԿ բոլոր կառոյցներին, անդամներին ու համակիրներին Հայաստանում թէ Սփիւռքի ողջ տարածքում եւ կոչ է անում լաւատեսութեամբ ու վերանորոգ հաւատով դիմաւորել 2018 թուականը, որը լինելու է կարեւոր հանգրուան մեր ժողովրդի ու պետականութեան կեանքում:

Արդարեւ, յառաջիկայ տարին յատկանշուելու է Սարգսյանի հերոսամարտով վերականգնուած հայկական պետականութեան 100-ամեակի, քաղաքամայր Երեւանի 2800-ամեակի, Արցախեան ազատամարտի 30-ամեակի տօնակատարութիւններով, ինչպէս նաեւ սահմանադրական վերջին բարեփոխումներով պայմանաւորուած պետական կառավարման նոր համակարգի կիրառմամբ, որտեղ առաջնային դերակատարութիւնը վերապահուած է խորհրդարանին: Ահա քաղաքական այն թիրախը, որին հասնելու պիտի պատրաստուենք այժմուանից, ի վերջոյ ՌԱԿ-ը կրկին խորհրդարանական կազմակերպութիւն դարձնելու տեսլականով:

Այս առիթով կարող ենք գոհունակութեամբ շեշտել, որ անցեալ տարեշրջանը արդիւնաւետ եղաւ կուսակցութեան շարքերը երիտասարդ, աշխոյժ անդամներով համալրելու եւ, ընդհանրապէս Հայաստանի տարբեր շրջաններում երիտասարդական ակումբներ, հաւաքատեղիներ, համակարգչային լսարաններ, մարզական եւ հրաձգարանային կենտրոններ ու շարժումներ ստեղծելու տեսլակտից: Երիտասարդական նմանօրինակ նոր կենտրոններ ստեղծելու ուղղութեամբ յառաջիկայ տարի իրականացնելու ենք նորանոր ծրագրեր, որոնց նպատակն է, ի վերջոյ, կուսակցութիւնը նախապատրաստել երիտասարդական աւիւնով գօտեպնդուած քաղաքական հզօր ուժի վերածելը:

Անցնող տարին յատկանշական էր նաեւ ՌԱԿ Սփիւռքի կառոյցների գործունէութեան տեսլակտից, յատկապէս ինչ վերաբերում է Պոսթօնում 85 տարի արդէն լոյս տեսնող մեր թերթի “Արմինըն Սիբրըր-Սփէքթէյթըր” պարբերականի յոբելեանի նշումը բացառիկ ձեռնարկներով, որոնց մասնակցում էին նաեւ միջազգային հեղինակաւոր լրագրողներ, ինչպէս նաեւ մեր քոյր կազմակերպութեան Թէքէեան Մշակութային միութեան հիմնադրման 70-ամեակի նշումը փառաշուք հանդիսութիւններով, Նիւ Ըերսիում, որոնց առաջին անգամ մասնակցում էին ԹՄՄ բոլոր կառոյցների ներկայացուցիչները տարբեր երկրներից:

Տարին բարեբեր էր նաեւ մեր մամուլի անդաստանի համար, որտեղ մեր երկու “հին”-նոր լրատուամիջոցները՝ “Պայքար” շաբաթաթերթը եւ “Հայ Չայն” համացանցային թերթը շատ արագ կարողացան իրենց շուրջը հաւաքել ընթերցողական մեծ լսարան:

Վերոյիշեալ ու տակաւին չիշուած բոլոր գործերը, կուսակցաշէն բոլոր նախաձեռնութիւնները ցոյց են տալիս, որ յառաջիկայ տարին մեր կուսակցութեանը յաջողուելու է նոր սահմանագծեր նուաճել հասարակական-քաղաքական կեանքում, Հայաստանում թէ Սփիւռքում: Սակայն նոր սահմանագծեր նուաճելը ենթադրում է հետեւողական, քրտնաջան աշխատանք: Իսկ մենք պատրաստ ենք համակարգուած ու համերաշխ աշխատանքի:

Ուրեմն լաւատեսութեամբ դիմաւորենք 2018 թուականը: Ողջոյն ժամանող նոր տարուան:

Ռամկավար Ազատական կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւն



ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻ՞ ՄԻՋԱՄՈՒԽ ԸԼԼԱԼՈՒ ՍՓԻՒՔԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ, ԻՍԿ ՍՓԻՒՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՐՈՅՐ 3. ԱՂՊԱՇԵԱՆ

Ահաւասիկ հիմնահարց մը, որուն մասին հազիւ թէ կը խօսուի, կ'արտայայտուի կամ կը գրուի:

Պատճառը՝ անգիտութի՞ւնը, անփութութի՞ւնը, անտարբերութի՞ւնը, թէ՞ համակերպութիւնը եւ, այն տրամաբանութեամբ (կամ իմաստութեամբ), որ՝

- Ստահողութեան պատճառ չկայ
- Հայաստանը պետականութիւն է
- Սփիւռքը ենթակայութիւն է
- Հաճոյախօսութիւնը վերաբերմունք է (Հայաստանի նկատմամբ)

- Պահանջարկութիւնը բնական է (Սփիւռքէն) Այսինքին՝

- Ստահողուելու որեւէ պատճառ չկայ, քանի եղածը սովորական յարաբերութեան արդիւնք մըն է.

- Հայաստանը կայացած պետութիւն մը ըլլալով, իրաւունք ունի իր գերակայութեամբ շարժելու ու գործելու.

- Սփիւռքը կենսունակ իրականութիւն մը ըլլալով, իր կարողական ամբողջ ներուժը ուղղած է դէպի հայրենիք.

- Հաճոյախօսութեան գործելաձեւով վերաբերուիլը եւ արտայայտուիլը «անձնատուութեան» ոճ դարձած է.

- Պահանջարկութեան կարգով գործունէութեան թափը եւ ընթացքը միակողմանիացնելը վերածուած է ընդունուած եղանակի:

Վերոյիշեալ նշումներով կ'ուզենք արձանագրել, որ Հայաստանի ու Սփիւռքի կամ Սփիւռքի ու Հայաստանի միջեւ կան յարաբերութիւններ, կան կամուրջներ, որոնք կը գործեն, կ'արդիւնաւորեն, կը ձեւաւորեն՝ Հայաստանէն դէպի Սփիւռք եւ Սփիւռքէն Հայաստան առնչութիւնները:

Մեր ակնարկութիւնը կ'երթայ ճիշդ այս կէտին, որովհետեւ բացայայտ է, որ Հայաստանը, ուղղակի թէ անուղղակի միջոցներով, տեղին թէ անտեղի միջամտութիւններով, շինիչ թէ ապակողմնորոշիչ նախաձեռնութիւններով, յաճախ անարդարութիւն, ապակայունութիւն կամ կողմնակալութիւն կը ստեղծէ Սփիւռքի մէջ:

Արդեօք արտօնուած է Հայաստանին նման հոգեբանութեամբ վերաբերուիլ Սփիւռքի հետ, երբ ան կը յայտնուի այս կամ այն հատուածին կամ շերտաւորումին մօտ, «յօնք շինելու տեղ, աչք հանելու» փորձառութեամբ. (թէ՞ դիտաւորութեամբ):



ΠΡΟΣΕΓΓΙΣΕΙΣ

Προσωπικές απόψεις για τα κοινά

του Σήφη Κασσεσιάν

ΠΕΡΙ ΑΥΤΟ-ΔΙΑΘΕΣΗΣ

Η αυτο-διάθεση, η ελευθερία εκφοράς αδέσμευτου, ακηδεμόνευτου και ανεπηρέαστου λόγου, το δικαίωμα στην επιλογή προσωπικού δρόμου στη ζωή είναι ίσως το ιδεώδες χάριν του οποίου έχει χυθεί περισσότερο από για οποιοδήποτε άλλο αίμα στην ιστορία του ανθρώπου, είναι ένα ιδεώδες συμφυές της ανθρώπινης φύσης και άρρηκτα δεμένο με αυτήν. Είναι, όμως, η άσκηση του σχετικού δικαιώματος χωρίς περιορισμούς; Φυσικά όχι. Λέγεται συχνά ότι η ελευθερία του ενός σταματά εκεί όπου αρχίζει η ελευθερία. Έννοιες που προτάσσουν το συμφέρον της κοινότητας (όπως “κοινή ησυχία”, “δημόσια αιδώς”, “χρηστά ήθη” κλπ.) συναντώνται στις νομολογίες όλων των κρατών και παραπέμπουν στον αποδεκτό και επιβεβλημένο έλεγχο και περιορισμό των ατομικών τάσεων και ροπών προκειμένου να προστατευτεί το συμφέρον του κοινωνικού συνόλου. Θα παραθέσω ένα χαρακτηριστικό περιστατικό: Στη διάρκεια της γερμανικής κατοχής της Γαλλίας κατά τον Β' Παγκόσμιο Πόλεμο, ένας αριθμός από πόρνες πρόσφεραν τα αγοραία θέληγτρά τους σε Γερμανούς στρατιώτες και στρατιωτικούς. Το σώμα ενός ανθρώπου είναι το πιο ιδιωτικό “περιουσιακό στοιχείο” του και λογικά η διάθεσή του πρέπει να είναι απόλυτο και αδιαμφισβήτητο δικαίωμα κάθε ατόμου. Το γαλλικό κοινό, όμως, έκρινε διαφορετικά τα πράγματα στη συγκεκριμένη περίπτωση. Οι συμπολίτες των εν λόγω ιερειών του αγοραίου έρωτα έκριναν την εν λόγω συμπεριφορά τους επιζήμια για το έθνος, ουσιαστικά προδοτική. Επινόησαν μάλιστα ένα καινοφανή όρο για να την χαρακτηρίσουν: “collaboration horizontale” (“οριζόντια συνεργασία [με τον εχθρό]”). Η ποινή που επιφύλαζαν στις ιδιότυπες συνεργάτιδες των Γερμανών οι Γάλλοι πολίτες ήταν το κούρεμα, το ξεγύμνωμα και η δημόσια διαπόμπευση.

Παραθέτω τα παραπάνω ως προοίμιο στην αναφορά μου στην πρωτοβουλία μερικών συμπατριωτών να συστήσουν στην Ελλάδα ένα Φιλελεύθερο Δημοκρατικό Κόμμα (Ραμγκαβάρ Αζανταγκάν Γκουσακτσουτιούν) παράλληλο με το υπάρχον από δεκαετίες, του οποίου ήσαν μέλη. Κρινόμενη από τη σκοπιά των εν γένει ατομικών δικαιωμάτων, η ενέργεια αυτή δεν έχει τίποτε το μεμπτό. Οι άνθρωποι αυτοί άσκησαν το δικαίωμά τους στην ελεύθερη επιλογή. Τα πράγματα όμως αλλάζουν αν σκεφτούμε ότι δεν πρόκειται για μια κατ' ιδίαν ενέργεια, αλλά για μια δημόσια ενέργεια που έχει ως πλαίσιο αναφοράς την αρμενική κοινότητα της Ελλάδας και ακόμα ευρύτερα τη Διασπορά και εν τέλει το αρμενικό έθνος συνολικά.

Ακόμα και ο πιο ανόητος, αλλά έστω και ελάχιστο πληροφορημένος και συνειδητός, παρατηρητής δεν μπορεί παρά να συμφωνήσει ότι το αρμενικό έθνος στο σύνολό του περνάει την κρισιμότερη περίοδο της ιστορίας του. Η παρακμή και η σήψη έχουν κατακλύσει ολόκληρη την αρμενική πραγματικότητα και -προς στιγμήν τουλάχιστον- δεν διαφαίνεται πουθενά ούτε μία ακτίδα φωτός.

Ας περιοριστούμε, όμως, στα της αρμενικής κοινότητας της Ελλάδας. Είναι καταφανές ότι -με ευθύνη των μέχρι τώρα “ιθυνόντων” όλων των παρατάξεων- η ιδέα του αρμενισμού δεν είναι προσφιλής και ελκυστική παρά μόνο σε ένα ελάχιστο ποσοστό των Αρμενίων που κατοικούν στην Ελλάδα. Η θεωρούμενη ως κορυφαία εκδήλωση της κοινότητας, η ανάμνηση της Γενοκτονίας τον Απρίλιο κάθε έτους δεν συγκεντρώνει περισσότερους από 400 περίπου Αρμένιους, δηλαδή ένα ποσοστό 1-2 τοις χιλίοις. Σε πολλές ήσσονος συμβολικής σημασίας εκδηλώσεις η συμμετοχή είναι ακόμα πιο τραγική. Παραδείγματα των οποίων υπήρξα αυτόπτης: Εκδήλωση στον Καρέα με προσκεκλημένο συντάκτη της αρμενικής εφημερίδας “Αγκός” από την Κωνσταντινούπολη. Παρόντες 30-40 πρόσωπα. Παρουσίαση στον “Γαλαξία” της Νέας Σμύρνης βιβλίου της Ελληνοαρμενίσσας μυθιστοριογράφου Χαράς Κοσεγιάν. Παρόντες 30-40 πρόσωπα. Ομιλία στο “Παρεκορτζαγκάν” Αρμένιου ποιητή και εκδότη από τη Βηρυτό.

Παρόντες 30-40 πρόσωπα. Εκδήλωση στην Εταιρία Ελλήνων Λογοτεχνών για τη μεταφρασμένη στα Ελληνικά αρμενική ποίηση. Παρόντες 30-40 πρόσωπα. Η λειψανδρία μαστίζει και άλλους -όλους ουσιαστικά- τομείς της κοινοτικής ζωής. Λίγοι μαθητές στα σχολεία, λίγοι αθλητές στις ομάδες μας, λίγοι αναγνώστες των εφημερίδων μας, απελπιστικά λίγοι οι πιστοί στους ναούς μας...

Ολιγάριθμη και αυτή, η παράταξη των προσκείμενων στο Καθολικότητα του Ετσματζίν (ένα μέρος της οποίας αποτελείται από μέλη του κόμματος Ραμγκαβάρ) έχει και αυτή αποδυναμωθεί στη διάρκεια των τελευταίων δεκαετιών. Παλαιότερα η παράταξη διέθετε χορωδία, προσκόπους, ενίοτε και νεολαία. Σήμερα τίποτε από αυτά δεν υπάρχει. Η εικόνα της απίσχνανσης και της αποδυνάμωσης είναι εμφανής.

Σε αυτό το πλαίσιο γενικής αποδυνάμωσης προβάλλεται η πρωτοβουλία για την ίδρυση της νέας συλλογικότητας. Κανείς (κανείς!) δεν μπορεί να πει τι καλό μας επιφυλάσσει η πρωτοβουλία αυτών των συμπατριωτών. Οι ίδιοι δεν την συνόδευσαν από κάποιο μανιφέστο, από μια διακήρυξη αρχών και θέσεων, από, έστω, μια καταγγελία πρακτικών που οι πρώην σύντροφοί τους είχαν ακολουθήσει και εφαρμόσει και που οι ίδιοι θεωρούν ως επιβλαβείς και καταστροφικές για την κοινότητα. Οι λαβόντες τη σχετική πρωτοβουλία αγνόησαν την κοινότητα και την άφησαν απληροφόρητη σχετικά με τις προθέσεις τους, επιτρέποντας έτσι στον καθένα να κάνει όποιες υποθέσεις θέλει σχετικά με τους σκοπούς τους.

Αν, όμως, κανείς δεν μπορεί να αποφανθεί σχετικά με το τι καλό μπορεί να προοιωνίζεται αυτή η πρωτοβουλία, οποιοσδήποτε μπορεί εύκολα να αποφανθεί ποιο κακό έχει ήδη προκαλέσει. Το κακό αυτό είναι η επίταση του διχασμού και η εμβάθυνση της αποδυνάμωσης. Διότι το ρήγμα στις τάξεις του Ραμγκαβάρ δεν μπορεί παρά να το αποδυναμώσει, άσχετα αν ο νέος σχηματισμός προσελκύσει το 1% ή το 99% των μελών του ήδη υπάρχοντος. Πολύ απλά, τα 30-40 άτομα που μετείχαν στις εκδηλώσεις του ΡΑΓΚ ή του Αραράτ, θα είναι πλέον ακόμα λιγότερα. Αλλά και οι ίδιοι δεν θα μπορούν να συγκεντρώνουν αυτό τον αριθμό στις δικές τους εκδηλώσεις. Πέρα από τον αριθμό, το ταλέντο και η δουλιά προσώπων που υπάρχουν και στα δύο μέρη, θα λείψουν αντιστοίχως. Και θα είναι απλώς γελοιότητα να προβληθεί η άποψη ότι οι αποσχισθέντες έχουν πρόθεση να επιτύχουν την ενότητα με κάποιες άλλες παρατάξεις και πλευρές της κοινότητας. Αυτό θα έπρεπε να το επιδιώξουν μένοντας στη δική τους και πείθοντας και τους υπόλοιπους να ασπαστούν μία τέτοια ιδέα, αν υπάρχει.

Οι λέξεις «προδότης» (ταβατζάν) και «προδοσία» (ταβατζανουτιούν) απαντώνται πολύ συχνά στο αρμενικό πολιτικό λεξιλόγιο. Προσωπικά δεν τις έχω χρησιμοποιήσει ποτέ. Και δεν θα τις χρησιμοποιήσω, αν όχι για άλλο λόγο διότι προδίδουν έλλειψη επιχειρημάτων και προσφυγή στο φανατισμό. Κάνοντας το δικηγόρο του διαβόλου, θα υποθέσω ότι οι λαβόντες την πρωτοβουλία ίδρυσης του νέου φορέα εμπνέονται από υψηλά ιδανικά, ότι έχουν μέσα τους μια φλόγα προσφοράς στο έθνος η οποία τιθασεύεται στο παλιό Ραμγκαβάρ και τώρα, ελεύθερη κι έχοντας σπάσει πλέον τα δεσμά της, θα ξεχυθεί σε ένα ποταμό (και γιατί όχι, ωκεανό) ρηξικέλευθης και αχαλίνωτης δημιουργικότητας, θα ανοίξει στην κοινότητα νέους ορίζοντες, θα την αναπλάσει και θα της δώσει νέα μορφή, θα ανοίξει νέους, ένδοξους δρόμους στα πεπρωμένα της... Θα περιμένω να τα δω όλα αυτά.

Εξόριστος στην Ιταλία, γράφοντας λίγο μετά την υπογραφή της Συνθήκης των Σεβρών στο προσωπικό Ημερολόγιό του, ο Ιωάννης Μεταξάς, σε μια εγγραφή, που αρκεί μόνο αυτή για να δείξει ότι ήταν σπουδαία προσωπικότητα, αναγνώριζε το μέγα επίτευγμα του αιώνιου πολιτικού αντιπάλου του Ελευθερίου Βενιζέλου: «Εμείς πλέον αποθάναμε πολιτικώς. Αλλά ας μεγαλυνθεί η Ελλάς και ας δοξασθεί...»

Έχω την κρυφή ελπίδα πως οι ιδρυτές της νέας κίνησης θα μου δώσουν την ευκαιρία να γράψω κάτι ανάλογο γι' αυτούς. Μέχρι τότε, όμως, το σημερινό και μέχρι σήμερα απτό, ορατό, υπαρκτό και αισθητό αποτέλεσμα είναι η αποδυνάμωση, αναιτία και αναιτιολόγητη -ως μη συνοδευόμενη από κάποιο κείμενο αρχών και θέσεων- μιας ήδη θνήσκουσας -όπως τόσες άλλες- κοινότητας της αρμενικής διασποράς. Και αν δεν καταφέρουν να ανατρέψουν διαρρήδη αυτή την πραγματικότητα οι «νέοι Ραμγκαβάρ», δεν θα είναι η ταπεινή γραφίδα του υπογράφοντος που θα τους απευθύνει τον χαρακτηρισμό των προδοτών, αλλά η ίδια η κοινότητά μας, η ίδια η αρμενική Ιστορία.

Բարգէն Մկրեանի Անթառամ Յիշատակին

Աստուածահաճոյ ընտիր հաւատացեալներէն մէկը, մեծ հայրենասէր մը, քաջ անխոնջ հաւատարիմ գաղափարի ընկեր մը, գեղեցիկ առաքինութիւններով զարդարուած անձնատրութիւն մը, ազնուական ամուսին մը, շնորհալի հայր մը: Հայրենիքի ճշմարիտ զինուոր մը, առատաձեռն բարերար մը, իր բացակայութիւնը միայն թախծալից կորուստ մըն է իր ընտանիքին հարազատներուն շրջապատին՝ Ռ.Ա.Կուսակցութեան՝ մեր ժողովուրդին՝ Հայաստան՝ Արցախ, Ջաւախքին, որովհետեւ իր ներկայութիւնը յոյս էր լոյս էր հաւատք էր գաղափարի ոյժ էր մարդուն եւ եկեղեցիին՝ մշակոյթին եւ հայրենիքին նուիրումով ծառայելու հաստատ փարոս մըն էր:



Ոգեկանութիւն մը՝ հայ ընտանիքի սրբութեան՝ ազգային՝ եկեղեցական՝ մարդկային բարոյական առաքինութիւններով առլցուն ժառանգութիւն մը, որ իր հետ տարաւ Հայկէն՝ Մ. Նահանգներ, եւ ապրեցաւ գործադրեց եւ արժանաւորեց այդ բոլոր շնորհները՝ աստղափոթի ճշգրտութեամբ եւ պատշաճութեամբ, զարդարելով Բարգէն Մկրեանի անթառամ ոսկեփայլ յիշատակը:

Մեր սրտաբուխ ցուակցութիւնները կը յայտնենք՝ մեր սիրեցեալ եւ վշտահար ընկերուհի Անահիտին, իր զուակաց Կարոյին՝ Արամին՝ իր հարազատներուն բարեկամաց եւ ընկերներուն, Ռ.Ա.Կ. Գերագոյն Խորհուրդին՝ Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան եւ եկեղեցական եւ Ազգային բոլոր հաստատութիւններու գործադիր մարմիններուն:

Աստուած գիտէ վարձատրել Արժանաւորները՝ Յաւիտենական պսակով:

«Նոր Աշխարհ»
Աթէնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻՆ

Հայաստանի կառավարութիւնը համաձայնութիւն տուաւ Հայաստանի եւ Եւրոպական Միութեան միջեւ Համապարփակ եւ ընդլայնուած համագործակցութեան համաձայնագիրին: Գործադիր մարմինը համապատասխան որոշում տուաւ 28 դեկտեմբերին գումարած իր նիստին:



Հայաստանի եւ Եւրոպական Միութեան միջեւ այս համաձայնագիրը ստորագրուած էր այս տարուան 24 նոյեմբերին՝ Արեւելեան գործընկերութեան վեհաժողովին ընթացքին:

Յայտնենք, որ նախագահ Մերժ Սարգսեան այս շաբաթակիցին հրամանագիր ստորագրեց համաձայնագիրի կիրարկումը ապահովող համակարգող միջգերատեսչական յանձնախումբ ստեղծելու մասին՝ փոխվարչապետ, միջազգային տնտեսական համարկման եւ բարեփոխումներու նախարար Վաչէ Գաբրիէլեանի գլխավորութեամբ:

ՆՇԱՆԵԱՆ ՓԱՅԼԱՆԻՆ ԿԸ ԹԵԼԱԴՐԷ ԼՔԵԼ ԹՈՒՐՔԻԱՆ

Ինչպէս ծանօթ է, պոլսահայ երեսփոխան Կարօ Փայլան, վերջերս, հարցազրոյցի մը առթիւ զգայացունջ յայտարարութիւն մը կատարելով ըսաւ, որ եւրոպական որոշ Հայերու եւ Ալեիներու դէմ թրքական ազգայնականներու կողմէ մահափորձերու շարքի նախապատրաստման մասին լուրջ տեղեկութիւններ ստացած են: Այնուհետեւ, ան յայտարարեց նաեւ, որ այդ տեղեկութիւնները հաստատուած են նաեւ գերմանական իշխանութիւններուն կողմէ:



Պոլսահայ մտաւորական, լեզուաբան Մեւան Նշանեան, որ քանի մը ամիս առաջ փախած էր թրքական բանտէն եւ հաստատուած Յունաստանի Սամոս կղզին, Twitter-ի իր պաշտօնական էջին վրայ մեկնաբանած է այս յայտարարութիւնը: Ան գրած է, որ Փայլանի հաղորդած տեղեկութիւնները արժանի են յատուկ ուշադրութեան ու ուսումնասիրութեան:

«Կարօ Փայլանի հարցազրոյցը կը պարունակէ տեղեկութիւններ, զորս պէտք է կարդալ առնուազն 3-4 անգամ եւ շատ ուշադրութեամբ: Եթէ Կարոյին տեղը ըլլայի՝ առանց ժամանակ կորսնցնելու կը լքէի երկիրը», - գրած է Նշանեան՝ նկատի ունենալով, որ այդ



AMBASSADOR OF THE REPUBLIC OF ARMENIA
AMBASSADEUR DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ



Թէքէեան մշակութային միութիւն
Օրթաուա, 15 Դեկտեմբեր 2017թ.

Յարգելի՛ Հայրենակիցներ,
Ուրախութեամբ տեղեկացայ Ամանորի առթիւ Թէքէեան Մշակութային Միութեան կողմից տպագրուելիք տարեկան օրագրքի մասին:

Այս հնարաւորութիւնն օգտագործելով՝ ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել Թէքէեան Մշակութային Միութեանը՝ ողջ տարուայ ընթացքում իրականացուած գործունէութեան համար: Մշակոյթը թերեւս հանդիսանում է հայ-գանատական յարաբերութիւնների ամենազօրեղ կամուրջ-ներից մէկը, եւ Միութիւնն իր ամենօրեայ աշխատանքով իր նպաստն է բերում այդ կամրջի ամրացմանը:

Միաժամանակ շնորհաւորում եմ Միութեան ողջ անձնակազմի ամանորն ու Սուրբ Ծնունդը՝ մաղթելով, որպէսզի 2018 թուականը իւրաքանչիւրիդ համար լինի աւելի արգասաբեր տարի:

Եւս մէկ անգամ շնորհակալութիւն յայտնելով անձնուէր աշխատանքի համար Թէքէեան Մշակութային Միութեանը ցանկանում եմ նորանոր նուաճումներ՝ ի շահ հայ ժողովրդի եւ Մայր Հայրենիքի:

Յարգանքով՝

Լեւոն Մարտիրոսեան

տեղեկութիւններու հրապարակումով Փայլան վտանգի կենթարկէ նաեւ իր իսկ անձը:

Սաֆրաստեան համակարծիք է Նշանեանի հետ

Գիտութիւններու ազգային ակադեմիայի Արեւելագիտութեան հիմնարկի տնօրէն, թրքագետ Ռուբէն Սաֆրաստեան Panorama.am-ի թղթակ ցին հետ զրոյցին անդրադառնալով Փայլանի յղումը Նշանեանի յանձնարարութեան, ըսած է. «Թուրքիայի գործող իշխանութիւններէն կարելի է եւ պէտք է ամէն բան սպասել, որովհետեւ անոնք ցոյց տուած են, որ կը դիմեն պատժիչ գործողութիւններու, բռնաճնշումներու՝ հաշուի չառնելով համաշխարհային հասարակական կարծիքը, նոյնիսկ իրենց դաշնակիցներու մօտեցումները»:

Շարունակում էջ 1-ին

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐԱԻՈՒՆՔ ՈՒՆԻ՞ ՄԻՋԱՍՈՒԽ ԸԼԼԱԼՈՒ ՍՓԻՒՔԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ, ԻՍԿ ՍՓԻՒՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՐՈՅՐ 3. ԱՐՊԱՇԵԱՆ

Արդեօք իրաւունք ունի՞ Հայաստանը, Սփիւռքը նկատելու միւթի ու վարկի անսպառ աղբիւր, միշտ անկէ ակնկալելով՝ տալու, դրկելու, նուիրելու շարունակական արարողութիւններ, յուշելով՝

- Հայերնիքը կը պահանջէ.
- Հայրենիքը կարիքն ունի.
- Հայրենասիրութիւնը կը հարկադրէ.
- Հայրենասիրութիւնը պարտաւորութիւն է.
- Հայրենասիրութիւնը առաքինութիւն է:

Եւ բազմաթիւ պատրուակներով «ողողել»ով Սփիւռքը եւ անոր մաս կազմող կազմակերպութիւնները, որպէսզի շտապեն իրենց շօշափելի ու գործօն մասնակցութիւններով հասնելու հոն՝ ուր իրենց ներդրումները կ'արժեւորուին:

Յստակացնենք:

Սփիւռքը երբեք չէ զլացած (ու պիտի չզլանայ) իր ներգործութիւններով ու նպաստներով, զօրավիգ կանգնելու Հայաստանին, բայց, այդ օրինակելի կեցուածքը պէտք է յարգուի այնպիսի փոխադարձական հորիզոնականով մը, ուր Հայաստանը գտնուի իր պետականավայել արժանաւոր դերակատարութեան մէջ, առանց սահմանազանցումներու կամ չափազանցութիւններու. առաւել՝ չչահագործելու իր հեղինակային դիրքերը, ի դէմս սփիւռքատարած հայութեան հայրենասիրական զգացումներուն եւ ապրումներուն:

Ջարմանալի չէ՞, որ Հայաստանը՝

- «Միջամուխ» կ'ըլլայ կարգ մը կուսակցութիւններու կեանքէն ներս - Շքանշաններու բաշխումով, հակամարտութիւններու ու քննողութիւններու «սերմեր» ցանելով
- Գիտաժողովներու կամ համագումարներու կայացումով, մրցակցութիւններու ու միջակութիւններու «դուռ» բանալով
- Սփիւռքահայ մամուլի հարցերը քննելու համար, համադրողական «ցուցադրական» փորձերու լծուելով
- Արեւմտահայերէն լեզուի պաշտպանութեան գծով, «պատահական»ութիւններով հաւաքներ կազմակերպելով

Այո՛, զարմանալի է, այնքան ատեն որ Հայաստանը այսպիսի անընդունելի ոճով եւ ընթացքով կը շարունակէ վերաբերուիլ Սփիւռքի հետ:

Տեսէ՞ք ու լսեցէ՞ք, թէ Հայաստանցի դիւանագէտ մը, ինչպէ՞ս կ'արտայայտուի Սփիւռքի ներկային եւ ապագային մասին, յառելով.

Հաստատանք մեծապէս կը գնահատէ Սփիւռքին հայապահպանման ու զաղութեան միջոցով: Հիմա որ Հայաստանը պետութիւն է, ձեր ազգային կառոյցները մեզի վստահեցէք (տուկէ՞ք) եւ մենք կրնանք զանոնք տնօրինել:

Չեմ գիտեր, թէ ասիկա անհատակա՞ն մօտեցում մըն է, թէ՞ պետական մտածողութիւն, բայց, հաստատ կրնամ ըսել, թէ ասիւրի ու զայթակղելի վտանգաւոր մտածում մըն է, որուն մասին պէտք է յամենալ, յամենալ եւ յամենալ...:

Սփիւռքը Հայաստանի նկատմամբ, ուղղակի կը գտնուի անկումային վայրէջքի մը վրայ, որովհետեւ այդ վերաբերմունքը կը մեկնաբանուի՝

- Փխրուն հայրենասիրութեամբ.
- Զգացական հայրենասիրութեամբ.
- Պատեհապաշտական հայրենասիրութեամբ.
- Հաշուեցկատային հայրենասիրութեամբ.
- Անցողակի հայրենասիրութեամբ:

Տակաւին չկրցանք հասկնալ (ու հասկնել), թէ հայրենասիրութիւնը միայն հայրենիք սիրել ու պաշտել չէ, այլ՝ հայրենիք պաշտպանել, կերտել եւ ամրացնել:

Այսօր, ամէն հայ կը խօսի հայրենասիրութեան ու հայաստանասիրութեան մասին, բայց, միթէ՞ այդպիսիները գիտեն թէ ի՞նչ կամ ո՞ր հայրենասիրութեան կ'ակնարկեն.

- Շքանշանի՞
- Անցաթուղթի՞
- Ապաստանի՞
- Տիտղոսի՞
- Փառքի՞

Պարզ չէ՞, որ հայրենասիրութիւնը, շատ-շատերու մօտ, գիտակցաբար թէ ոչ, աղաւաղուած ու խեղաթիրուած է, այնքան ատեն որ անիկա գրեթէ դուրս եկած է իր մաքրամաքուր էութենէն ու բովանդակութենէն, երբ մարդիկ՝

Նախագահ Սերժ Սարգսեան եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոս այցելած են «Եռաբլուր» պանթէոն



30 Դեկտեմբեր 2017-ին նախագահ Սերժ Սարգսեան Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին հետ եւ հանրապետութեան բարձրագոյն ղեկավարութեան ընկերակցութեամբ այցելած է «Եռաբլուր» զինուորական պանթէոն:

Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի հասարակութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնը կը հաղորդէ, թէ Հայաստանի նախագահն ու Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը յարգանքի տուրք մատուցած են հայրենիքի անկախութեան համար իրենց կեանքը զոհաբերած հայադրոյիներու յիշատակին:

-Յետամուտ են պատիւներու ձեռքբերութեան ու հերթագրութեան

- Անցաթուղթ ստանալու հետքի մէջ են
- Հայաստանը նկատելու «ապահով» վայր, եթէ արտասահմանի մէջ անկայուն վիճակներ առաջանան
- Տիտղոս կամ կոչում ստանալու առիթներէ օգտուին
- Ժողովրդականութիւն վայելելու կամ ժողովրդականութեան հասնելու գօտիներ մարմնաւորուին
- Եթէ սխալ են վերոյիշեալները կամ կասկածողներ կան անոնց իրաւացիութեան մասին, պահ մը, ամէն ոք, անաչառ եւ առարկայական հասկացողութեամբ, թող դիտէ չորսդին ու լսէ, թէ սփիւռքահայը՝

- Հայրենիքը ինչպէ՞ս կ'ընկալէ
- Հայրենասիրութիւնը ինչպէ՞ս կ'ընդունի
- Հայրենաժառանգութիւնը ինչպէ՞ս կ'արդարացնէ
- Հայրենակառչածութիւնը ինչպէ՞ս կը դրսեւորէ
- Հայրենապաշտպանութիւնը ինչպէ՞ս կը գործադրէ

Յստակ է. երկու կողմերն ալ՝ Հայաստան թէ Սփիւռք, իրենց առաւելութիւններով, համագործակցութիւններով եւ իրարօգնութիւններով հանդերձ, յաճախ կը գտնուին հակոտնեայ կամ իրերամերժ հարթակներու վրայ:

Առաջինին «պահանջողական» կարգավիճակը, երկրորդին՝ «ենթակայական», ո՛չ կը մխիթարէ, ոչ ալ կ'երաշխաւորէ այն ազգային-հայրենական բարօրութիւնը, որուն այնքան այրող պահանջքը ունի հայ ժողովուրդը:

Վերջին հաշուով, պիտի ըմբռնել թէ՞ ոչ, որ հայ ժողովուրդը, իր Հայաստանով ու Սփիւռքով, կենդանի ու բաբախող իրականութիւն մը մնալու եւ յարատեւելու համար, օրի ու ջուրի ման պէտք ունի իր էասին հայրենիքը պահելու գերիշխան, իսկ իր ոգեկից եւ ոգեծին լրացուցիչ Սփիւռքը սատարող պատնէշ, պայմանաւ որ ամէն մէկը մնայ իր ազգային ակունքներուն հարազատութեան կրկնօրինակը, առանց միջամտութեան փորձերու:

Մերժ Սարգսեան. «ԼՂ հարցով միջազգային հանրութիւնն ու Հայաստանը կը խօսին գրեթէ նոյն լեզուով»

Լեոնային Ղարաբաղի հիմնախնդիրին հարցով միջազգային հանրութիւնն ու Հայաստանը կը խօսին գրեթէ նոյն լեզուով: Այս մասին, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան յարկին տակ յայտարարած է ՀՀ նախագահ Մերժ Սարգսեան՝ անդրադառնալով զարաբաղեան հակամարտութեան:



«Լեոնային Ղարաբաղի հիմնահարցի բացառապէս խաղաղ կարգաւորումը կը մնայ մեր արտաքին եւ անվտանգութեան քաղաքականութեան օրակարգին առաջնագիծին վրայ: Անկախ բանակցային գործընթացին մէջ 2020-ի տարեկան առաջընթացին բացակայութենէն՝ մենք կրնանք արձանագրել, որ շուրջ մէկ տարուան ընդմիջումէն յետոյ տեղի ունեցաւ Հայաստանի եւ Ատրպեյճանի նախագահներու ժրնետեան հանդիպումը, որուն իբրեւ արդիւնք ընդունուեցաւ համատեղ յայտարարութիւն եւ ձեռք բերուեցաւ համաձայնութիւն լարուածութեան թուլացման վերաբերեալ:

Այս հարցով միջազգային հանրութիւնն ու Հայաստանը կը խօսին գրեթէ նոյն լեզուով. առիկա լուսազոյն արտայայտուած է թէ՛ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահող պետութիւններու պատուիրակութիւններու ղեկավարներուն, թէ՛ ՀԱԳԿ Մինսքի գազաթնաժողովի յայտարարութիւններուն մէջ, թէ՛ Հայաստան-Եւրոպական Միութիւն Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրին մէջ»,- նշած է ՀՀ նախագահը:

ՄԻՆՍԿԻ ԽՄԲԱԿԸ ՊԱՔՈՒԻՆ ԵՒ ԵՐԵՒԱՆԻՆ ՓՈԽԱՆՑԱԾ Է ԵԱՀԿ-Ի ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ

ՊԱՔՈՒԻ, «Էյ.Փի.Էյ.»- Մոսկուա կ'ողջունէ զարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացի աշխուժացումը, ներառեալ նախարարներու յառաջիկայ հանդիպումը (Յունուարի երկրորդ կիսուն), եւ շահագրգռուած է անոր արդիւնաւետութեամբ. 27 Դեկտեմբերին այսպէս յայտարարեց Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Կրեկորի Քարասին:



«Ինթըրֆաքս»ի հետ հարցազրոյցի մը ընթացքին Քարասին շեշտեց, թէ Ռուսիա եւ ԵԱՀԿ Մինսկի խմբակի միւս համանախագահները կ'աջակցին Պաքուի եւ Երեւանի ձգտումներուն՝ ցարդ կատարուած աշխատանքին հիման վրայ հակամարտութեան փոխզիջումային հանգուցալուծում փնտռելու:

Քարասին յիշեցուց նաեւ, որ երկար ընդմիջումէ ետք, այս տարուան Հոկտեմբերին, համանախագահներուն աջակցութեամբ իրականացած էր հայ-ատրպեյճանական գազաթնաժողով մը, որուն ընթացքին կողմերը խոստացած էին աշխուժացնել բանակցային գործընթացը եւ գիծին վրայ լարուածութիւնը մեղմացնելու միտող միջոցներու ձեռնարկել:

Քարասին ըսաւ, որ Ատրպեյճանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարները այս ամիս Վիեննայի մէջ կայացած ԵԱՀԿ-ի անդամ պետութեանց արտաքին գործոց նախարարներու նստաշրջանի հարթակներուն վրայ քննարկած են հակամարտութեան կարգաւորման առանցքային այս հարցերը, որոնց վերաբերեալ առայժմ կարելի չէ եղած համաձայնութեան հասնիլ:

«Քննարկուած են հակամարտութեան գօտիին վրայ իրավիճակը զսպելու նպատակով հնարաւոր գործողութիւնները: Նաեւ, կողմերուն փոխանցուած են ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելութեան ընդլայնման հետ կապուած յստակ առաջարկութիւններ», եզրակացուցած է Քարասին:

Սաթիկ Մէրանեան նորընտիր նախագահուի Հայաստանի Լրագրողներու Միութեան

Ուրախութեամբ կ'ողջունենք Հայաստանի Միութեան նախագահուի Տիկ. Սաթիկ Մէրանեանի ընտրութիւնը:



Խիստ պատասխանատու եւ վտանգաւոր պաշտօն մը, որ պէտք ունի խօսքի ազատութիւնը, մարդկային իրաւունքները շինիչ եւ բարեկարգիչ քննադատութիւնները ընկերային արդարութիւններ պաշտպանող անձնաւորութիւն մը: Այս պաշտօնը նախարարի մը պաշտօնէն աւելի կարեւոր եւ զգայուն պաշտօն մըն է:

Որովհետեւ այս պաշտօնը կապ ունի ժողովուրդին եւ հայրենիքին ամէնօրեայ մարդկային կեանքին եւ գործող բոլոր պետական կառոյցներու աշխատանքները քննող՝ քննադատող սրբագրող եւ գնահատող երակին հետ:

Ուստի ոյժ կարողութիւն՝ հաւատք՝ կորով՝ քաջութիւն՝ յանդգնութիւն՝ խիզախութիւն՝ լայնախոհութիւն՝ տոկոսութիւն եւ համբերութիւն, եւ մասնաւորապէս առողջութիւն եւ յաջողութիւն կը մաղթենք շնորհաւորելով Տիկ. Սաթիկ Մէրանեանի ընտրութիւնը:

Այս առիթով մեր խորին յարգանքը եւ մեծարանքը կը յայտնենք Տիկ. Աստղիկ Գեորգեանին, որ դժուարին եւ երկար տարիներով համբերութեամբ եւ խոհեմութեամբ նախագահեց այս դժուարին պաշտօնը մաղթելով իրեն առողջութիւն եւ երկար տարիներ:

Յարգանք՝ «Նոր Աշխարհ»ի խմբագրութիւն

10 ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ ԱՐՑԱԽԻ ՀՆԱ-Ն ԱՃԱՄ Է ՄՕՏ 4 ԱՆԳԱՄ

Տասը տարուան մէջ Արցախի Համախառն ներքին արդիւնը (ՀՆԱ) աճած է 3,8 անգամ: ԱՀ պետական նախարարի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու բաժինէն փոխանցուած տեղեկութիւններով այս մասին ըսած է ԱՀ պետական նախարար Արայիկ Յարութիւնեան:



Անոր խօսքով՝ մօտ 70 միլիարդ դրամի անուանական ՀՆԱ-ն տասը տարուան մէջ հասած է մօտ 270 միլիարդ դրամի: Նոյն ժամանակահատուածին արդիւնաբերական արտադրանքի ծաւալը աճած է 2,7 անգամ՝ գերազանցելով 59 միլիարդ դրամը: 2,2 աճած է միջին անուանական աշխատավարձը՝ 2007-ի 68.000 դրամէն 2017-ին հասնելով 153.000 դրամի:

«Եթէ 2007 թուականին Արցախի մէջ կ'արտադրուէր 90 միլիոն քուաթ/ժ էլեկտրականութիւն՝ այս տարի անիկա պիտի ըլլայ մօտ 350 միլիոն քուաթ/ժ՝ 10 տարուան մէջ մօտ 3,8 անգամ աւելի: Իսկ քանի մը տարիէն ջրաէլեկտրակայանի արտադրանքը պիտի հասցնենք մօտ 800 միլիոն քուաթ/ժ-ի»,- անդրադառնալով ուժանիւթի ոլորտին՝ նշած է պետական նախարարը:

10 տարուան մէջ մօտ 40%-ով աճած է մշակուող հողատարածքներուն քանակը, իսկ արտադրուած հացահատիկի ծաւալը աճած է աւելի քան երեք անգամ՝ 2007-ի 52.000 թոնէն անցնող տարի հասնելով 160.000 թոնի:

Այցելեցէք Հայաստանի էլեկտրոնային Հրատարակութեան կայքը
Հայաստան
haydza.am
Հայաստան

«ԱՄԵԱԿՆԵՐ»՝ ԱՊՐՈՒԱԾ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴՄԷՋԷՆ

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԷՃԵԱՆ



Մարդուն անհատական, հաւաքական ու ազգային կեանքին մէջ կարեւոր իրադարձութիւն է ամեակներու նշումը: Կարծէք հոն կեանքը պահ մը կանգ կ'առնէ տեսնելու համար, թէ ինչ պատահած է նոյնինքն կեանքին՝ անհատական, հաւաքական եւ ազգային իր պատմութեան տարբեր հոլովոյթներուն ընդմէջէն: Այս իմաստով է, որ ամեակները կը դառնան կեանք՝ ապրումը պատմութիւն, իրենց տարբեր ելեւէջներով: Ու տակաւին նոյն այդ կեանքին մէջ, եթէ պիտի կարեւորենք ներկան, բայց անոր կողքին նաեւ պիտի

նայինք ապագային՝ հորիզոնէն անդին, ծրագրելու համար նոյն կեանքին գալիք օրերը:

Ինչպէս բոլորին, իմ կեանքիս մէջ ալ ամեակները ունեցած են յաջորդական փուլային հոլովոյթներ, որոնք ստեղծած են ինքնութեան եւ պատկանելիութեան գիտակցութիւն: Սակայն հիմնականը եղած է կեանքիս փորձառութեան ընթացքին այդ գիտակցութեան առնչուած դաստիարակութեան ընկալումը տարբեր բնագաւառներուն մէջ:

Անշուշտ իւրաքանչիւր փորձի ու փորձառութեան պարագային ինքզինք կը պարտադրէ նաեւ ապրած ամեակներու իմ մէջ կերտած գիտութիւնը, եւ մանաւանդ ինքնագիտակցութիւնը՝ կեանքիս համար:

Օնցած եմ ընտանիքի մը մէջ, որ երկար տարիներու վրայ ու տարբեր սերունդներու համար ունեցած է ազգային եւ եկեղեցական աւանդ: Եւ այս Այնթապէն-Հասան Պէյլիէն սկսելով, հասնելով՝ Հալէպ ու ապա Պէյրութ, եւ ներկայիս քիչ մը տարածուած ամէնուրեք: Հայրս շատ մանուկ՝ Այնթապէն տեղահանուելով, իր ընտանիքին հետ հասած է Հալէպ եւ մեծցած ու դաստիարակուած «երազային Հալէպի» այդ ջերմ մթնոլորտին մէջ: Անցած է Պէյրութ եւ մասնագիտացած է որպէս դեղագործ, բայց երաժշտութիւնը մնացած է իր կեանքին սերը: Եւ իր ողջ կեանքին ընթացքին հայկական կեանքին մէջ իր ներդրումը ունեցած է երգի ու երաժշտութեան ընդմէջէն: Մայրս ծնած է Այնթապ, ապա Հալէպ, եւ եղած է հիւանդապահուի:

Ազգային-հայկական կեանքի կազմաւորումս եղաւ եկեղեցիի դաստիարակութեան միջոցաւ: Չունեցայ այսպէս ըսած կուսակցական-միութենական պատկանելիութիւն եւ անոր միջոցաւ փոխանցուած ազգային կրթութիւն: Հօրս լռելեան օրհնութեամբ եւ մօրս հօգը քաջալերանքով հասակ առի հոգեւոր-եկեղեցական աշխարհին մէջ, եւ որուն միջոցաւ ալ տակաւ-տակաւ սկսայ բացուիլ ազգային ինքնութեան եւ անոր գիտակցութեան:

Հայրս ապրած էր 1958-ի Լիբանանի քաղաքացիական կռիւները: Եւ սկանառես եղած էր այդ կռիւներուն մէջ ներառուած միջնակական թշնամանքին եւ բախումներուն: Ունեցած էր իր սեփական դեղարանը Պէյրութի Մար Միսայէլի շրջանին մէջ, եւ քաղաքացիական կռիւներուն ժամանակ ստիպուած եղած էր միշտ բաց պահելու զայն՝ շտապ օգնութեան հասնելու արտակարգ իրավիճակին: Եւ հոն ալ ապրած էր ցար:

Երկու երիտասարդ հայ եղբայրներ, որոնք իր դեղարանին առջեւ հայկական փամփուշտով գետին փռուած էին: Ու կար այդ մէկ երիտասարդ եղբոր նայուածքը իրեն եւ վերջին խօսքը աչքերը փակելէն առաջ. «Քիչ մը ջուր հաճիս»:

Հայրս երբեք չէր պատմած այս պատմութիւնները ինծի: Մայրս էր, որ կը պատմէր. «Ամիսներ հայրդ չի կրցաւ քնանալ», ըսաւ ան: «Գիշերները կ'արթննար շնչահեղձ ու կ'ըսէր, - քիչ մը ջուր»: Եւ չէր ուշանար մօրս զգուշացումը ինծի. «Հօրդ բան մը չ'ըսես, որ գիտես այս պատմութիւնները»: Բայց ես կրնայի տեսնել նոյնինքն այդ ցարերը հօրս ներաշխարհին մէջ: Երբ քաղաքական նիւթեր կը խօսուէր, կը տեսնէի, թէ հայրս հոն չէր: Եւ կամ չէր ուզէր հոն ըլլալ: Պարզապէս իր աշխարհը չէր: Բայց երաժշտութեան հետ ան էտ կը դառնար կեանքին: Եւ կը փորձէր մեր ազգային արժէքները ստեղծել ինծի՝ երաժշտութեան եւ մշակույթի միջոցաւ:

1975-ին սկսաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը: Այս անգամ իմ կարգս էր ապրելու զայն եւ իմ փորձովս: Հայրս մեկնեցաւ այս աշխարհէն եւ կարծէք ձեռք ինծի ապրելու զայն իմ փորձովս: Հայ քաղաքական կուսակցութիւններու որդեգրած «դրական չեզոքութիւնը» մէջս ամրապնդեց ազգային հաւասարակշռուած դաստիարակութեան առաջին հիմքը: Եթէ 1958-ի դէպքերը միայն լսած էի, 1975-ի իրադարձութիւնները կ'ապրէի բայց նաեւ կը սորվէի ու կը գիտակցէի: Եթէ անհատը էր պատերազմը եւ անոր ձգած ողբերգական ցնցումները, բայց կար նաեւ մէջս մեծցող ազգային ինքնութեան ու անոր հաւատարմութեան նկատմամբ քննական-առարկայական մօտեցումը: Եւ մեր գաղութի դեկավարները յաջող կերպով այդ մօտեցումները մեզի փոխանցեցին:

Բայց սորվելու եւ գիտակցելու այս գործընթացը տակաւին երկար էր: Եթէ Ցեղասպանութեան ամեակները համահայկական էին, բայց ոչ, օրինակի համար, առաջին Հանրապետութեան հիմնադրութիւնը՝ Մայիս 28-ը: Եւ այս թուականը եթէ գիտէինք, թէ հայկական էր, բայց մօտիկ չէր: Հոն տեղ մը հորիզոնին վրայ երեւցող-չերեւցող ամեա կ'մը: Ու կարգ մը կրթական հաստատութիւններ՝ յարգելու համար դպրոցները փակ պահելու իրականութիւնը, կը յայտարարէին այդ օրը որպէս «դաշտագնաութեան օր»: Կը հարցնէինք, կը փնտռէինք, ու կը մտածէինք: Թէ ինչ է այս թուականը եւ որ ու է: Մերն է թէ միւսին է: Բայց ո՞վ է մերը եւ ո՞րնք են միւսները:

Հայկական երկրորդական վարժարանէն ետք պիտի անցնէինք համալսարանական կրթութեան եւ իմ պարագայիս՝ Հայկազեան Քոլեճ

(այժմ համալսարան): Եւ մասնագիտական ուսումին կողքին կային նաեւ ուսանողական գործունէութիւնները: Եւ հոն էր Հայկական Ակումբը եւ անոր ներկայացուցչական կազմը: Եթէ կար կուսակցական ներկայացուցչութիւնը, բայց նաեւ կար համայնքայինը: Եւ քանի՞ անգամ իւրաքանչիւրէն: Թիւի թէ՛ ներկայացուցչական հանգամանքները պէտք էր, որ նկատի առնուէին: Եթէ կազմը ամբողջացուցինք, կարգը կուգար ձեռնարկներուն: Եւ անոր մէջ կարեւոր տեղ պիտի գրաւէր Մայիս 28-ի ձեռնարկը: Ինչու՞ պէտք էր կազմակերպուէր եւ ինչ բովանդակութեամբ: Ո՞վ է ինչ պէտք էր որ խօսէր: Ու տակաւին Եռագոյն դրօշակը: Պէտք էր, որ գետեղուէր, թէ ոչ: Կար այդ վարկածը, թէ այդ դրօշակը հատուածական էր: Բայց երեւի պիտի սպասէինք հասնելու համար ներկայ օրերուն, ուր Եռագոյնը պիտի գետեղուէր ամէն տեղ հայկական մեր իրականութիւններուն մէջ՝ ներառեալ մեր սրտերուն մէջ:

Հայաստանի Հանրապետութեան ներկայութիւնը Սովետական համակարգի մէջն էր: Հայաստանը մերն էր, բայց նաեւ հեռու եւ ոչ շատ հասանելի: Քիչ մը կ'ընդունէինք, երբեմն ալ ոչ: Կար քաշքշուկը, երկմտանքը ու տարակուսանքը: Իմ պարագայիս, կար հօրեղբորս տոքթ. Ռոպէր Ճէպլեճեանի հաւատամքը Հայաստանի նկատմամբ: Հօրեղբորս համար Հայաստանը վեր էր ամէն տեսակի համակարգէ: Արժէք էր եւ այդ գիտակցութեամբ ան իր ողջ կեանքը նուիրեց հայրենիքի կեանքին եւ անոր յառաջխաղացքին: Եւ իր միջոցաւ առջեւս կը բացուէր Հայաստանի գիտա-մտաւորական ու պատմական մեծ աւանդ մը: Բայց կային նաեւ հայրենի արուեստագետներու պարբերական այցելութիւնները եւ ելոյթները Պէյրութի մէջ: Ու տակաւին հայրենի Արարատ ֆուլպոլի խումբը, ուր իւրաքանչիւր մարզիկ մեզի համար դարձած էր ազգային հերոս: Կ'ուրախանայինք, կ'ոգեւորուէինք, կը լիցքաւորուէինք բայց նաեւ մէկ-մէկ ազգային ինքնութեան կազմաւորում կը դառնար այդ բոլորը:

1988-1990: Ղարաբաղեան շարժումը եւ Հայաստանի անկախացումը: Ու անհասկի պատմութեան մէջ հայրենի երրորդ Հանրապետութիւնը արդէն իմ եւ մեր աշխարհին մէջ էր: Եւ առիթը ունեցայ 1991-1996 տարիներուն կանոնաւորաբար այցելել Հայաստան եւ աշխատիլ՝ հիմնելու համար Աստուածաշունչի Ընկերութեան մեր գրասենեակը հայրենիքի մէջ: Հոս արդէն հայրենիքի իրականութիւնը դարձած էր անմիջական կեանքիս մէջ: Կ'ապրէի զայն, իր հարազատութեամբ ու ոտքս դրած հայրենի հողին վրայ կ'ապրէի ոչ թէ հեռուէն եւ կամ պատմութենէն ինծի փոխանցուած իրականութիւնը եւ կամ դաստիարակութիւնը: Հայրենիքը իրական էր, շօշափելի էր զգալի իրականութիւն: Եթէ մէկ կողմէ կը տեսնէի հայրենիքը իր հարազատութեամբ, միւս կողմէ կ'ըմբռնէի զայն իր բոլոր մարտահրաւերներով: Բայց նաեւ կը սորվէի, թէ քննադատութիւնը բաւարար չէ: Հայրենիքը պէտք ունի դրական ուժին սրկումին: Թէ ներկայիս այս է իմ ունեցածս եւ թէ անհրաժեշտ էր զայն պահել, բայց մանաւանդ աւելցնել անոր վրայ: Եւ այս մինչեւ այսօր իմ ապրած կեանքիս փորձն է:

Կիրակոսը չափահաս տարիքի Հայաստան ապրող վարորդ է: Իմ վերջին այցելութիւններէս մէկուն ընթացքին խնդրած էի իրմէ, որ զիս տանէր Արցախ: Եւ ճամբորդութիւնը բաւական երկար ըլլալով կար հաճելի գրոյցը: Եւ անոր ընդմէջէն իմ հետաքրքրութիւնս: «Կիրակոս, դուն որ ապրած ես սովետական ժամանակաշրջանը ինչպէս կը համեմատես զայն ներկայ օրերու իրականութեանը հետ», եղաւ իմ հարցումներէս մէկը:

Կիրակոսը եւ երեւի իր կեանքի փորձէն մեկնելով, ունէր քննական հաւասարակշռուած մօտեցում: «Ոչ մէկ տեղ եւ համակարգ անսխալ եւ ամբողջական է», ըսաւ ան: «Սովետի օրերուն ալ նոյնն էր եւ այդպէս պէտք է մօտենալ», շարունակեց Կիրակոս: Ան անդրադարձաւ սովետական ժամանակաշրջանին ժիտական եւ դրական կողմեր ունենալու իրականութիւններուն: Եւ ինչպէս արեւելահայերէնի մէջ կան դիպուկ արտայայտչական մօտեցումներ: Կիրակոս եզրափակեց. «Սովետական շրջանը ունէր իր միւսիւնները եւ բլուսները»:

Հոկտեմբեր 20, 2017: «Ազդակ» օրաթերթի կազմակերպած լսարանի դասախօսն էր Փրոֆ. Աշոտ Մելքոնեանը՝ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ակադեմիայի Պատմութեան հիմնարկի տնօրէնը: Ան խօսեցաւ «Հայաստանի Հանրապետութեան 1918-1920, պատմութիւն եւ արդիական խնդիրները» նիւթին մասին: Փրոֆ. Մելքոնեան քննական-առարկայական մօտեցումով վեր առաւ մեր երեք հանրապետութիւնները եւ անոնց պատմական տուեալները: «Երրորդ հանրապետութիւնը պիտի չ'ըլլայ, եթէ չ'ըլլար երկրորդը, եթէ երկրորդը կեանքի կոչուեցաւ, այդ ալ առաջինին շնորհիւ: Մինչեւ երրորդ Հանրապետութիւն երկարող այս շրջան մենք կը պարտինք 1918-ի Մայիս 28-ի հրաշքին եւ իբրեւ ազգ եւ երկիր պատրաստ ենք յաւուր պատշաճի նշել այդ փառահեղ հարիւր ամեայ յորելեանք», ըսաւ ան:

Փրոֆ. Մելքոնեանի շրջան կրցայ հետեցնել ապրած կեանքի փորձառութիւններու շրջայիս: Եւ կեանքիս շրջաններէն իւրաքանչիւրը՝ լսած, ապրած թէ փորձուած, ինք իր պարունակին մէջ դարձաւ ինքնութեան փորձառութիւններու վերահաստատում: Եւ տեսայ նաեւ ինչպէս այս փորձառութիւններու շրջան իրարու հետ կապուած եւ զիրար ամբողջացնող իրականութիւն դարձած է: Եւ թէ ինչպէս այդ փորձառութիւնները կամաց-կամաց կազմեր են ազգային ինքնութեան հասկացողութիւնը, որ համահայկական է եւ մեր բոլորին կը պատկանի: Ան կը պատկանի իր «միւսիւններով» եւ «բլուսներով»: Մերն է, հայկական է, իւրայատուկ է եւ իւրաքանչիւր հայ պէտք է իւրացնէ ու պահէ զայն, մէկ կողմէ սորվելով անցեալէն, իսկ միւս կողմէ պահելու համար ներկան եւ կերտելու համար ապագան:



**Կարկանդակի
բաշխում**



Հ. Բ. Ը. Միութեան Յունաստանի Կեդր. Ցանձնաժողովը,
սիրով կը հրաւիրէ ձեզ,
Նոր Տարուայ Կարկանդակի բաշխումին, որ տեղի
պիտի ունենայ

**Կիրակի 14 Յունուար 2018-ին,
երեկոյեան ժամը 6:00-ին,**

Հ. Բ. Ը. Միութեան «Հրանդ եւ Լուիզ Ֆէներճեան»
հանդիսասրահին մէջ
(Նափիլիու 11, Փ. Ֆալիբո):

Կարկանդակի բաշխում

Արարատ Մ.Մ.Միութեան
Տիկնանց մարմինը սիրով կը
հրաւիրէ Ձեր բոլորին
կարկանդակի բաշխումի որ տեղի
պիտի ունենայ՝



**Չորեքշաբթի,
17 Յունուար 2018-ին
երեկոյեան
ժամը 6.30-ին**

Հ.Բ.Ը.Մ.-ԱՐԱՐԱՏ կեդրոնի «Անանիա եւ Վարդուհի
Խաչատուրեան» սրահին մէջ:

**ΣΥΛΛΟΓΟΣ ΓΟΝΕΩΝ ΚΑΙ ΚΗΔΕΜΟΝΩΝ
ΑΡΤΑΚΙ ΚΑΛΠΑΚΙΑΝ**



Օի μαθητές του Ιδιωτικού Σχολείου της Γενικής Αρμενικής Ένωσης
Αγαθοεργίας Αρτάκι Καλπακιάν επισκέφτηκαν τον πρέσβη της
Δημοκρατίας της
Αρμενίας Fadey
Charchohlyan
για να του πουν
τα κάλαντα.

Η φιλοξενία
τον πρέσβη και
του διπλω-
ματικού προ-
σωπικού άφησε
τα παιδιά με τις
καλύτερες εντυπώσεις. Η συνέχεια έγινε με τον Δήμο Παλαιού
Φαλήρου που τους μικρούς μαθητές υποδέχτηκαν για τα κάλαντα ο



ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

**Նուիրուած՝ Անմահ Բարերարներ
ԿԱՐԱՊԵՏ ԵՒ՝ ԳՐԻԳՈՐ ՄԵԼԳՈՆԵԱՆ
ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ**

Յունաստանի Մելգոնեանցի սան սանուհիները
կը հրաւիրեն բոլոր մելգոնեանցիները
ներկայ գտնուելու
Անմահ Բարերարներու
Հոգեհանգստեան Արարողութեան
որ տեղի պիտի ունենայ

Կիրակի, 14 Յունուար, 2018

**Փերիսթերիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ
Առաւօտեան ժամը 10.30-ին**

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Արարատ Մ.Մ.Միութեան
“Օրիւման” թատերախումբը
հայ եւ յոյն հասարակութեան
պիտի ներկայացնէ Յակոբ
Պարոնեանի “Երկու Տիրոջ
Մէկ Օտարան” կատակերգու-
թիւնը յունարէն լեզուով
24-25 Փետրուար 2018-ին:

Մանրամասնութիւնները
յաջորդիւ:

*“Օրիւման”
թատերախումբ*

Գրաւուած Օրեր

**4 Փետրուար 2018,
11 Փետրուար 2018
(Պազար)**

**Արարատ
Մ.Մ.Միութիւն**

**Քաջալերեցէք
հայ
մամուլը**

Անτιδήμαρχος Πόλης Κανέ-
λλος Θεόδωρος, ο Αντιδή-
μαρχος Τεχνικών Υπηρεσιών
Ασημακόπουλος Γεώργιος και
η Αντιδήμαρχος Περιβάλλον-
τος & Πρασίνου: Ανδρι-
κοπούλου Βασιλική, όπου και
εκεί η φιλοξενία ήταν υπέρ του
δέοντος. Καλές γιορτές σε
όλους, ευτυχισμένο το 2018
για όλο τον κόσμο.

**ՆՈՐ ԱՇԽԱՐՀ
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Սեփականութիւն
ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՈՒԹԻՒՆ
Միսթու 33, Նիքեա, Յունաստան

Համակարգչային
շարուածքը եւ էջադրումը՝
ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի

Տնօրէն՝
Ընկ. Սարգիս Խաչատուրեան

Արտօնատէր -
Փաստարան՝
ընկ. Յակոբ Տեւաճեան

**“NOR ASHAP”
Արմենիկ Էբօմաճաճա
Էփմերիճա
Իճոկտէշա “APAPAT”
Փիլօլօգիկօ Աթլէտիկօ Տօմաթէիօ**

Դաաթոնտիշ
Տարկիշ Խատտօուրաճ
Էկճօտիշ -
Իաճօբօս Փաթչաճ Դաիկօգօրօս

Տիշտօս 33 - TK 18450 - Նաիա
Տիլ: 210-4926085

**“NOR ASHKHAR”
Armenian Cultural Social Weekly
33 Sistou Str.
GR 18450 NIKEA GREECE
Tel-Fax: 00+30+210-4926085**

Բաղի իմրագրականներէն,
յօղուածագիրներն սեւակէտ-
ներն ու գաղափարները անպայ-
մանօրէն չեն արտայայտէր թեր-
թին ուղեգիրը:

ԱՐԱՐԱՏԻ ՎՐԱՅ ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱԻՈՐ ԱՊԱՅՈՅՑՆԵՐ ԳՏՆՈՒԱԾ ԵՆ

ԱՄՆ Geoscience ուսումնարանի գիտնականները յայտարարած են, որ Արարատ լեռան վրայ գտած են Նոյեան Տապանի մասին աստուածաշնչեան պատմութեան ապացոյցները:



Աշխարհի աւելի քան 100 հետազոտող հաւաքած էր Թուրքիա՝ Արարատ լեռան վերաբերեալ եռօրեայ միջազգային հաւաքոյթին, գիտնալու համար, թէ կրնա՞ն արդեօք իրենք գտնել այն վայրը, ուր, ըստ արանդապատումի, կանգ առած է Նոյեան Տապանը: Այս մասին, ըստ PanArmenian.net-ի, գրած է բրիտանական Daily Mail-ը:

Նշենք, որ 2010-ին, խումբ մը չինացի եւ թուրք գիտնականներ կազմակերպած էին գիտարշաւ՝ ուսումնասիրելու համար այն շրջանը, ուր կանգ առած է Նոյեան Տապանը, եւ գտնելու համար անոր մնացորդները: Գիտարշաւէն քանի մը շաբաթ անց՝ անոնք յայտարարեցին, որ 4000մ բարձրութեան վրայ գտած են 150մ երկարութեամբ եւ նաւու մնացորդներ յիշեցնող փայտի կտորներ:

ԱԲԵԼԻ ՔԱՆ 100 ՏԱՐՈՒԱՆ ՕՏԱՐՈՒԹԵՆԵՆ ԵՏՔ «ԳՐԻԳՈՐ ԶՈՒՐԱՊ» ԳՈՐԳԸ ԳՏԱՒ ԻՐ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ

Հայկական գորգի ազգային կեդրոնի հետևողական աշխատանքի շնորհիւ, հնարաւոր եղաւ ձեռք բերել և Հայաստան տեղափոխել «Գրիգոր Զոհրապ» պատմական նշանակութիւն ունեցող գորգը:



«Գրիգոր Զոհրապ» գորգը խորհրդանշական ձեռքբերում մըն է Հայկական գորգի թանգարանին համար: Ան կ'ամփոփէ հայ ժողովուրդի պատմութեան ամբողջ-ական ժամանակաշրջան մը, որ լեցուն է անվերջ պայքարով, մեծ կորուստներով եւ վերապրելու կարողութեամբ:

Հայկական լեռնաշխարհը գորգագործութեան հնագոյն կեդրոններն է: Հայկական գորգարուեստը որքան որ տարբեր է իր գոյներով, զարդանախշերով, խորհրդանշերով եւ մոթիֆներով, այնուամենայնիւ կ'առանձնանայ իր ուրույն ձեռագրով: Այս բազմազանութեան մէջ հետքերական են դիմանկարային գորգերը, որուն մէկ նմոյշն է «Գրիգոր Զոհրապ» գորգը:

Շարունակուած էջ 6-էն

«ԱՄԵԱԿՆԵՐ»

Ու դարձեալ փրոֆ. Մելքոնեանը. «Թիւր կարծիք է, որ մենք անկախութեան մտայնութիւնը չենք ունեցած: Անկախութեան համար պայքարը շատ անթելուած ձեւով մեր հասարակական-քաղաքական միտքը իր սրտին մէջ ունեցած է արդէն»:

Եւ անկախութիւնը միայն աշխարհագրական ու հողատարածք-սահմաններու հասկացողութիւն չէ: Ան մտքի, մտածողութեան, ինքնութեան անկախութիւն է: Հոն, ուր հայ մարդը, կ'ապրի իր ազգային կեանքը իր հարազատութեամբ եւ հպարտութեամբ: Կ'ապրի այս աշխարհին մէջ եւ կը յարաբերի իր մշակութային եւ անոր ամբողջական ազատութեան հասկացողութեան ընդմէջէն:

Ամեակները մեր պատմութեան մէջ այս ազատութիւնն է, որ կերտած ու շնորհած են՝ ինծի համար, եւ իմ իւրաքանչիւր կեանքի փորձառութիւններու ընդմէջէն, ինչպէս նաեւ իւրաքանչիւր հայու համար:

Եւ հայը իր այս ամեակ(ներ)ը պարտի իւրացնել, ինչպէս նաեւ շարունակել պահել ու կերտել նոր ամեակներ:

Ամեակներ՝ ապրուած փորձառութիւններու ընդմէջէն:

Եթէ ամեակը հայուն պատմութիւնն է, ապա ապրուած փորձառութիւնը հայուն անկախութիւնն է՝ հողին, ինքնութեանը եւ մշակոյթին, հայուն համար, մեր բոլորին համար:

Ազրպէյճանը Նպաստեց, Որ 2017-ին Արցախի Այցելեն Գրեթէ Կրկնակի Շատ Զբօսաշրջիկներ.

Լափշին

«Ինծի համար հեռացող 2017-ը հեշտ չէր, քանի որ այդ տարուան գրեթէ 9 ամիսը անցուցած եմ ազրպէյճանական բանտին մէջ Արցախ այցելութիւններու պատճառով: Ինծի բախտ վիճակ-ւեցաւ գտնուիլ ազրպէյճանական զլաններու կեղտոտ հաշիւներու մէջ, տեղեկանալ Ալիեիներու ընտանեկան խժոժութիւններու մասին, թոչիլ Պաքուի սուլթանի կնոջ անձնական օդանաւով եւ տեսնել, թէ ինչպէս իրարու կոկորդ կը կրծեն իշխանութեան ու քարիւղային փողերու համար այդ իսլամական երկրին մէջ, անոնց ցեղապաշտութիւնն ու ասելութիւնը ոչ միայն հայ ժողովուրդի նկատմամբ (արցախեան հակամարտութեան պատճառով), այլեւ այլադաւաններու նկատմամբ ընդհանրապէս... Փորձելով վախցնել ամբողջ աշխարհը՝ զաճաճային Ազրպէյճանը, ընդհակառակը, նպաստեց, որ 2017-ին Արցախ այցելեն գրեթէ կրկնակի աւելի զբօսաշրջիկներ, քան նախորդ տարի: Անոնց մէջ էին մերձբալթիկայէն իմ լաւ բարեկամները, որոնք ֆիլմ նկարահանած են այս հրաշալի երկրամասի, անոր մշակոյթի, ժողովուրդի, բնութեան, յուշարձաններուն մասին»: Այս մասին գրած է լրագրող Ալեքսանդր Լափշին, որ այժմ կը գտնուի Չեխիա:



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐՈՒՆ 25 ՏՈԿՈՍԸ ԹՈՒԱՅՆԱՑՈՒԱԾ Է

ԵՐԵՒԱՆ.- Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէնի պաշտօնակատար Վահան Տէր Ղեւոնդեան կը տեղեկացնէ, որ Մ ա տ ե ն ա դ ա ր ա ն ի ձեռագիրներուն 25 տոկոսը թուայնացուած է:



«Թում է քիչ տոկոս է, սակայն դրա յետեւում մեծ ծաւալի աշխատանք կայ: Թուայնացման գործընթացն ամէն տարի շարունակուում է: Ասեմ, որ թուայնացումն անմիջական կապի մէջ է վերականգնման աշխատանքների հետ: Վերանագնումից յետոյ նոր ձեռագիրն ուղարկուում է թուայնացման», ըսաւ Վահան Տէր Ղեւոնդեան:

Մատենադարանը այս տարի Գիտութեան պետական կոմիտէին աջակցութեամբ ձեռք բերած է նոր սարք մը, որ հնարաւորութիւն կու տայ թուայնացնել միքրոժայիլները:

«Մինչ նոր տեխնոլոգիաները (արհեստագիտութիւնները-Խմբ.), օգտագործում էինք միկրոֆիլմեր, այսինքն՝ ձեռագիրը լուսանկարուում էր, եւ յատուկ սարքի միջոցով ժապաւէնի պարունակութիւնն ընթերցուում էր: Այդ սարքը դանդաղ էր աշխատում, բացի դա, տեսողութիւնն էր վնասում: Այսօր ձեռք ենք բերել սարք, որը ցանկացած միկրոժայիլէն թուայնացնում է եւ համակարգչով հանգիստ կարող ենք ընթերցել ժապաւէնի պարունակութիւնը», բացատրեց Վահան Տէր Ղեւոնդեան:

Գալ տարի, Մատենադարանի գերմանացի գործընկերները կը ծրագրեն նուիրել սարք մը, որ հնարաւորութիւն կու տայ ընթերցել մագաղաթի վրայ նախապէս եղած ձեռագիրները: Միջնադարուն մագաղաթը սուղ էր, գրուած ձեռագրերը 100-200 տարի ետք, երբ նոր գիրք գրելու անհրաժեշտութիւն կը յառաջանար, եղածը կը ջնջուէր, անոր վրայ նորը կը գրուէր:

«Այդ ջնջուած գրութիւնն անզէն աչքով չի երեւում, սակայն փոսիկները մնում են, անհա այս սարքը հնարաւորութիւն կը տայ դրանք նոյնպէս ընթերցել, եւ չի բացառում, որ նոր հետաքրքիր տեղեկութիւններ բացայայտուեն: Մենք Մատենադարանում մի քանի տասնեակ կրկնագրեր ունենք», ըսաւ Տէր Ղեւոնդեան: